Լեռ Կամսար

Փառապանծ Վրիպակներ

Համամարդկային

Ինչքա՜ն այլազան կրոններ կան: Ըստ իս, կրոն է նաև կոմունիզմը, որու համար ավելի հավատք է պետք, քան քրիստոնեությա-նը, ու որուն խոստացած երկրային արքայությունը ավելի հեռու է, քան քրիստոնյա-ներու երկնայինը: Մեկի պաշտամունքի վայրը կկոչվե եկեղեցի, մյուսինը՝ կարմիր անկյուն: Մեկի պաշտոնյան տերտեր կկոչվե, մյուսինը՝ կուսկոմ: Մեկը մորուք կթո-ղու, մյուսը՝ ոչ: Մեկը Քրիստոսի անունովը իր հացը կվաստկե, մյուսը՝ Լենի-նի:

Ես, առաջ, նախքան սա գիրք կարդալը, կկարծեի, թե կրոնները ոչ թե մարմնի, այլ հոգու փրկությանը միայն կծառայեն…

1926

Եթե մահն ինքնին սարսափելի չէ, այլ սարսափելի է մահվան գաղափարը, ապա, ուրեմն, մեռնում է ոչ թե մեռնողը, այլ կենդանի մնացած մարդը:

1960

***

Իմ քերականության մեջ հատուկ անունը միայն անհատն է մասսան չի կարող ենթակա լինել որեւէ նախադասության մեջ, որովհետեւ ես նրան ստորոգյալ չեմ տալիս:

Մասսան անհատի լրացումն է միայն:

1960

Քրիստոնեությունն էլ կոմունիզմի նման մի կամուրջ է, որի տակից երբեք գետ չի հոսել:

1960

Ստրկությունն անհրաժեշտ է ազատությունն իր գաղափարի բոլոր սահմաններով երազելու համար: Մի երազ, որ ավելի փայլ է տալիս ազատությանը, քան իրականությունը:

1960

Կարո՞ղ է հանցագործությունը վերանալ այն երկրից, որտեղ մեղավորը... դատավորն է:

1960

Ժամանակը երեք հավասար մասերի՝ ներկայի, անցյալի և ապագայի բաժանելը արդար չէ: Նրանք հավասար արժեքի հասկացողություններ չեն: Հիմնական արժեքներ են միայն անցյալն ու ապագան, ներկան մի սրընթաց առու է միայն, որ մի ակնթարթում մեր ապագան բերում թափում է անցյալի լիճը: Ու երբ ուզում ես իսկապես ապրել, նստում ես քո հիշողության թևերին, թռչում դեպի քո անցյալը: Անցյալը ներկայի պես չի փախչում, նա միշտ անշարժ կանգնած քո հիշողությանն է սպասում՝ նորից քեզ հետ նույնանալու համար:

1960

…Մարդիկ, որոց համոզումները արդեն ոչ թե գլխուն մեջ կգտնվե, այլ դրամապանակին:

1928

Ինձի մնա, չարժե մեռնիլ ոչ մեկ գաղափարի համար: Վասնզի ա-մենեն մեծ գաղափարը բուն կյանքն ինքն է: Ու կյանքեն մեծ գաղափար մը տիեզերքը չի ծնած տակավին:

1928

Ինչպե՞ս իսկույն կփոխեն մեզ մոտ մարդիկ իրենց սկզբունքները:

Երեկո դաշնակ կպառկեն՝ առտու բոլշևիկ կզարթեն:

… Տխմա՞ր պետություն, եկեր Երևանի թա՞ց, ջուրի չափ խոնավ տունե՞ր կապահովագրես հրդեհին դեմ: Տուներ, որոց վառելու համար պետք է քանի մը ամիս փուռը չորցնել:

Մարդոց սկզբունքները ապահովագրե, որ գեթ մեկը երկու օր միևնույն սկզբունքին ծառայե…

1928